Եէնկիչէրի ոմն արբեալ՝ կալեալ զկին մի ճանապարհի եւ քարշէր զնա բռնութեամբ զի տանիցի ուր և կամին. և քաջացեալ կնոջն աղաղակաւ չփոխել քայլ մի ոտին, եւ նա ստէպ ստէպ քարշէր տանջանօք զմեծ ժամս ճակատ առ ճակատ. և իբրև ոչ կարէր փրկիլ կինն, սրտապնդեալ՝ խսկոյն հանէ ի բաց զդանակ եէնկիչէրուն և հարու ի փոր նորա, և առ ժամայն սատակէր։ Եւ որք զնոյն տեսեալ մնային անդ՝ ըմբռնեալ զկինն. նաեւ ընկերք եէնկիչէրուն հասանեն եւ հանեն առ վէզիրն. եւ նա հարցանէր զկինն։ Եւ ասէ կինն. Ե՛ս արարի. եւ ասէ վէզիրն, Ընդէ՞ր։ Ասէ կինն. Քարշէր զիս մեծաւ բռնութեամբ տանել ի կամս իւր, և իբրև չկարացի յաղթել և փրկել զիս ի ձեռաց նորա, իւրով դանակաւ հարի ի փոր նորա եւ մեռաւ։ Եւ վէզիրն առաքեալ արս վասն համեստութեան կնոջն վկայելոյ, թէ կինն այս անպարկեշտ իցէ՝ ընդ նմին և կորիցէ։ Եւ այր նորա ասաց. Ո՛վ տէր, եթէ այնպէս իցէ՝ հրամայեա՛ զի կնոջ իմոյ դահիճ ես լիցիմ. և զտանեն զկինն անվնաս։ Եւ վէզիրն զդատախազս կնոջն, որ մեռելոյն ընկերք էին, և զնոսա սպան, և զկինն բեհեզ զգեստօք[1]) խելայեաց, ետ և բաշխս նմա և արձակեաց։ Այսպէս կառավարէր զամենայն և բուռն իշխանութեամբ տիրէր ամենից։ Եւ բազում եէնկիչէրաց, զօրուճից եւ օթուրախից զռոճիկն պակասեցուցեալ, եւ զսպահուն նոյնպէս անհամար, քանզի նախ ասէին ԽՌ եւ ԾՌ սպահ[2]) յաւելի գոլ, եւ այժմ ԺԸՌ լինէր եւ Ճ-ին Ա, Ճ-ին Կ, Կ-ին Ի, մինչ ի Զ. այսպէս պակասեցուցեալ. և զայլս պատմեցաք թէ սպան։ Եւ բազումք երկնչէին գալ յայսր և առնուլ զռոճիկն զի մի սպանցին պատճառանօք ինչ։ Եւ արկ զձեռն ի

1) սգեստօք. 2) սփահ.